

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՐԿՈՒ ԾՅՈՒՂԵՐԻ ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ-ՀՆՉՅՈՒՆԱՓՈՒՍԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Ո. Կ. ՍԱԶՈՒՏՏՈՅԱՆ

Արևելահայերենի և արևմտահայերենի ուղղագրական-հնչյունափոխական տարբերակների մանրամասն քննությունը ակնհայտ է դարձնում մի իրողություն. գուգաձևություններն առկա են ոչ միայն արևելահայ-արևմտահայ լեզվական համակարգերի միջև, այլ արևմտահայերենը ինքն իր մեջ ունի մի շարք տարբերակներ (երբեմն միևնույն բառն ունենում է գրության 2-3 ձև): Այդ առումով առաջարկում ենք արևելահայերենի և արևմտահայերենի ուղղագրական-հնչյունափոխական տարբերակների հետևյալ դասակարգումը.

1. Արտաքին (միջհամակարգային) գուգաձևություններ:

2. Ներքին (ներհամակարգային) գուգաձևություններ:

Արտաքին գուգաձևություններ կամ տարբերակներ ասելով՝ նկատի ունենք արևելահայերենի և արևմտահայերենի միջև եղած գրության տարբերությունները, երբ լեզվի տարբերակներից յուրաքանչյուրը դիտարկվում է իբրև առանձին, ինքնակա համակարգ, ուստի հիշյալ տարբերությունները ավելի ճշգրիտ կլինի անվանել միջհամակարգային տարբերություններ: Դրանք ընդգրկում են ամենատարբեր երևույթներ, որոնք ներկայանում են հետևյալ ենթախմբերով:

1ա. Ընդհանրական (շեշտից կախված) հնչյունափոխության հետևանքով առաջացած տարբերություններ: Միևնույն հնչյունը յուրովի է իրեն դրսևորում տարբեր դիրքերում՝ բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում, բաց և փակ վանկերում, բառակազմական կամ քերականական փոփոխությունների դեպքում: Այստեղ մենք անդրադառնում ենք շեշտափոխական հնչյունափոխության այն դեպքերին, որոնք ի հայտ են գալիս բառակազմության ժամանակ և երկու տարբերակներում նույնական չեն:

Ինչպես հայտնի է, հնչյունափոխական երևույթները, որոնք ընդգրկում են տվյալ հնչյունի համաձայն բոլոր դիրքերը, ստանում են հնչյունական օրենքի արժեք, միևնչեռ այն հնչյունափոխական երևույթները, որոնք գործում են առանձին բառերի ու բառախմբերի սահմաններում, հետևողական, բացառություններ չընդունող հնչյունական օրենքի արժեք չեն ստանում: Այսպես, բառավերջի բաց վանկում ի ունեցող բազմավանկ բառերում ձայնավորով սկսվող բաղադրիչ ավելանալիս չկա կայուն օրինաչափություն. ի-ն կարող է և՛ սղվել, և՛ պահպանվել՝ բարի-բարություն, գյուղացի-գյուղացիություն: Հիշյալ դիրքում հնչյունափոխական նույն երևույթը արևելահայերենում և արևմտահայերենում դրսևորվում է տարբեր կերպ՝ առաջացնելով բառաձևերի տարբերություն: Հմտո՝ գերանդի-գերանդիավոր և գերանդավոր, խելացի-խելացիություն և խելացություն...

Միևնույն հղի արմատից բաղադրված հղանալ և հղիանալ բառաձևերը արևելահայերենում ստացել են իմաստային տարբերակվածություն, որ արևմտահայերենում բացակայում է. երկու իմաստն էլ կարող են արտահայտվել հղանալ բառաձևով: Դա առավել ակնհայտ է դառնում, երբ հակադրում ենք նույն արմատով կազմված այլ բառաձևեր. արևելահայերեն՝ հղիանալ, հղիացնել, հղիություն, և արևմտահայերեն՝ հղանալ, հղացնել, հղություն (...Ես քեզի հետ, ծանր ամիսին հղությանդ, այգիիս մեջ ման եկա... Դ.Վ.):

Քաղաքավարի (անքաղաքավարի) բառը արևմտահայերենում ունի քաղաքավար (անքաղաքավար) ձևը, այսինքն -վարի մակբայակերտ վերջածանցը հանդես է գալիս -վար ձևով: Ըստ երևույթին այս բաղադրության մեջ ի-ն գիտակցվում է իբրև ածանց, ինչպես՝ թշնամի-թշնամություն, մորթի-մորթապաշտ, վայրենի-վայրենություն և նման այլ դեպքերում՝: Հակառակ երևույթն ենք նկատում հայելի արմատով կազմված բաղադրություններում. արևելահայերենը բառավերջի ի-ն սղում է, իսկ արևմտահայերենը, ընդհակառակը, պահում է: Այսպես, արևելահայերենի հայելագործ, հայելագարդ, հայելագուրկ, հայելավոր, հայելապատ, հայելացնել, հայելացվել, հայելափայլ և նման այլ ձևերի փոխարեն արևմտահայերենը գերադասում է ի-ով ձևերը՝ հայելիագործ, հայելիագարդ, հայելիագուրկ, հայելիաուր, հայելիապատ, հայելիացնել, հայելիացուիլ, հայելիափայլ:

Կանոնական փոշելաթ, փոշեկուլ կազմությունների հետ միասին արևմտահայերենը փոշեպատ ձևի փոխարեն տալիս է փոշիապատ բառաձևը, թեև մի քանի այլ բաղադրություններում ի-ն սղվում է՝ փոշանօթ, փոշարձակ՝ այսպիսով դրսևորելով բացարձակ անհետևողականությունն այս արմատով կազմվող բաղադրություններում:

Մի քանի բառերում նկատելի է տարբերություն $\text{ի} + \text{ա} = \text{ե}$ հնչյունափոխության մեջ: Ընդ որում դրանք խիստ մասնավոր բնույթ են կրում. լեզվի տարբերակները ընդհանուր առմամբ պահում են օրինաչափությունը, շեղումները հանդես են գալիս առանձին դեպքերում: Այսպես, արևելահայերենը գերադասում է կղզիախուսբ, կղզիաբնակ բառաձևերը, արևմտահայերենը՝ կանոնական կղզեխուսբ և կղզեբնակ կազմությունները:

Մի շարք դեպքերում, երբ արևելահայերենում երկփակ ի ունեցող բառերն ու արմատները բառակազմության մեջ մտնում են հնչյունափոխված հիմքով, արևմտահայերենը գործածում է այդ բառերի անփոփոխ հիմքերը: Օր.՝ բջիջային, բջիջաուր, ծիծմայր, կացինահար, կացինահարել, կացինահարություն, կացինել, շիլանալ, շիլություն, շնուկ, շիլոտ, սիրտխառնուկ: Սրանց փոխարեն արևելահայերենն ունի բջջային, բջջավոր, ծծմայր, կացնահար, կացնահարել, կացնահարություն, կացնել, շլանալ, շլություն, շիճուկ, շլոտ, սրտխառնուք:

Ռետին արմատից կազմված ռետինապատ, ռետինային բառերը դրսևորում են հակառակ օրինաչափությունը. արևելահայերենում ի-ն չի հնչյունափոխվում, արևմտահայերենում ունենք ռետնապատ, ռետնային ձևերը:

Արևմտահայերենում ճիպոտ բառը ունի նաև ճպոտ հնչյունափոխված տարբերակը, որ ձեռք է բերել լրացուցիչ բառիմաստ՝ խմբավարի, նվագավարի փայտիկ:

Էշ արմատը անշեշտ դիրքում գործածելիս արևելահայերենում գործում է է-ի հնչյունափոխությունը (էշ-իշուկ): Արևմտահայերենում բառարմատը մի քանի բարդություններում մնում է անփոփոխ՝ էշուկ, էշաձեամն:

Իբ. Բաղաձայնական համակարգի տեղաշարժ-տեղափոխության հետ կապված հնչյունափոխական երևույթներ:

Այս ենթախմբում միավորվում են պայթական բաղաձայնների հանրահայտ հնչյունափոխության հետևանքով առաջացած տարբերակները, երբ արտասանության պլանում խուլ պայթականները վերածվում են ձայնեղների, իսկ ձայնեղները՝ շնչեղ խուլերի: Այս հնչյունափոխության հետևանքով առաջանում են նույնահունչ համանուններ, որոնք ունեն տարբեր գրություն, բայց արտասանվում են նույն կերպ, ինչպես օրինակ՝ անձ-անց, անձավ-անցավ, անձուկ-անցուկ, գայլ-քայլ, գող-քող, ձախ-ցախ և այլն: Հիշյալ հանգամանքը որոշ առումով կարող է շփոթության տեղիք տալ, մանավանդ երբ տվյալ բառը դիտարկվում է

¹ Տե՛ս Գ. Զահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, I մաս, Ա պրակ, Եր., 1980, էջ 135:

համատեքստից դուրս: Սակայն քանի որ դրանք տարբեր գրություն ունեն, շփոթելու վտանգը ի հայտ է գալիս միայն մասնավոր դեպքում՝ արտասահմանայան պլանում: Այսպես է ներկայանում հարցը բնիկ հայերեն բառերի կամ ավանդական գրություն ունեցող բառերի դեպքում: Հարցը բոլորովին այլ կերպ է ներկայանում նորագույն փոխառությունների և օտարաբանությունների դեպքում: Ձրգտելով հարազատ մնալ փոխատու լեզվի արտասահմանայանը՝ արևմտահայերենը բառը տառադարձում է՝ հաշվառելով տեղաշարժ-տեղափոխության հետևանքով առաջացած հնչյունական իրողությունները: Արևմտահայերենում դա հանգեցնում է օտար լեզուների ձայնեղների դիմաց խուլերի, իսկ խուլերի դիմաց՝ ձայնեղ գրանշանների գործածությանը՝ **B—Պ, G—Կ, D—Տ և P—Ք, K—Ք, T—Պ:** Եվ քանի որ արևելահայերենը փոխառյալ բառերի տառադարձության ժամանակ պահպանում է փոխատու լեզուների պայթական բաղաձայնների համակարգը, ապա երկու տարբերակների միջև առաջանում են ուղղագրական տարբերակներ: Նշենք մի քանի բնորոշ օրինակներ. **Բաբելոն-Պապելոն, Բեյրութ-Պեյրութ, Բրոնզ-պրոնզ, գազ-կազ, գրանիտ-կրանիթ, դոլար-տոլար, իդեալ-իտեալ** և այլն:

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս դեպքում փոփոխությունն առկա է անկախ հնչյունի դիրքից. այն գործում է թե՛ բառասկզբում, թե՛ բառամիջում և թե՛ բառավերջում: Ընդ որում երևույթը նկատելի է թե՛ բնիկ հայերեն և թե՛ փոխառյալ բառերում: Բնիկ հայերեն բառերի դեպքում բնականաբար հնարավոր է երկու մոտեցում. կամ պահպանել ավանդական գրությունը՝ չաղճատելու համար բառապատկերը, կամ հավատարիմ մնալ արտասահմանայանը:

Այն բոլոր դեպքերում, երբ հիշյալ դիրքում առաջնային նպատակ է դառնում ավանդական արտասահմանայան պահպանումը, նկատվում է շեղում բաղաձայնների գրության սովորական ձևից. այսինքն՝ ավանդաբար ձայնեղ պայթականներով գրվող բառերը սկսում են գրվել խուլ պայթականներով, իսկ շնչեղ խուլերով գրվողները՝ ձայնեղներով, դրանով իսկ արևմտահայերենում առաջացնելով ուղղագրական շեղում ավանդական գրությունից: Բերենք առավել բնորոշ օրինակներ հիշյալ գրություններով.

Բամպակ, բճիճ, բոպիկ, գաղճ, գանկ, գինտ, գունտ, գտակ, թագուն, թաղանդ, թարբ, թոթոշ, թուղբ, լինտ, խենդ, խնձոր, խոշտանկել, խորտուբորտ, ծղրիթ, կակաշ, կարկաշ, հաշել, ճամբայ, մագոգ, պոռալ, պրոնզ, սանտերթ, տաղել, տարչին, տմպօ, տնճալ, փափաք, փուն, քլունկ:

Հիշյալ բառերում երկվությունն առաջանում է գրությանը կամ արտասահմանայանը առավելություն տալու առումով, քանի որ առկա է բառի ավանդական գրությունը: Մինչդեռ փոխառյալ բառերի դեպքում կա մեկ գերխնդիր. գրությունը հարմարեցնել արտասահմանայանը՝ հնարավորինս ճշգրտությամբ վերարտադրելու համար բնագրի արտասահմանայանը: Դրա հետևանքը լինում է այն, որ աղճատվում է բառապատկերը՝ ձայնեղ պայթականները տառադարձվում են խուլ պայթականներով, իսկ շնչեղ խուլերը՝ կամ ձայնեղներով, կամ էլ բուն շնչեղ խուլերով, որ տալիս է միևնույն արդյունքը. երկու դեպքում էլ դրանք ունենում են շրճեղ խուլ արտասահմանայան, ինչպես երևում է ներքոհիշյալ օրինակներից:

Ալպոմ, ամպիոն, աքբիրին, քրինձ (արքայազն), գամելիազարդ, գամելենոն, գոնիաք, էբոս, թիթ, թրուպատոր, ժանտարմ, իմբերիալիզմ, Իոլանտա, իտեալ, լիդր (լիտր), լիտր (լիդեր), լոկարիթմ, լորտ, խապրիկ, կազ, կեավոր, կոթական, կոնտոլ, կորիլա, կրամ, կրանիթ, հապ, դարիպ, մահմետական, մարգիզ, մեթոտ, պալալաքա, պալէ, պանան, պեխ, պեմոլ, պէլ, պոմպա, պրահման, պրաւօ, ուտիօ, տալեր, տարվիշ, տիալեկտիկա, տիեզ, տիտաքտիկա, տոլար, տունա, տոքտոր, տոամ, ֆուտպոլ...

Հիշյալ երևույթը առավել ցայտուն է դրսևորվում փոխառյալ հատուկ անուն-

ների (աշխարհագրական տեղանուններ, անձնանուններ) տառադարձության ժամանակ. Աղլանտեան, Բարիզ (Փարիզ), Բոլ (Փոլ), Գոլոմպոս (Քոլոմպոս), Ինտոնեզիա, Մաքոն, Միպրալթար, Մակելլան, Միսիսիփի, Նիկեո, Նորվեկիա, Շուէտ, Պաքո, Պէլրոթ, Պիթլիս, Պոմպէլ, Պոռնիօ, Պրագիլ, Պուկարիա, Սիպերիա, Սուտան, Վոլկա, Տանեմարքա, Տարտանէլ, Տիլիճան, Քապուլ, Քիւպա, Քոնկո, Ֆինլանտա, և այլն, ինչպէս նաև՝ Ալտա, Ատրիճէ, Չապէլ, Ջոհրապ, Ժաք, Կիլիզար, Հրանդ, Մանիկ, Միւան, Մօն, Մատլէն, Նուպար, Պալասան, Պաղտասար, Պեաթրիս, Ռոպէր, Տալիթա, Քլարա, Օլկա, Ֆերտի-նանտ և այլն:

1գ. Տարբեր լեզուների ազդեցության ոլորտում գտնվելու հետևանքով առաջացած հնչյունական տարբերություններ:

Արևմտահայերենը, լինելով սփյուռքահայության հաղորդակցման լեզուն, արտացոլում է այն լեզուների իրակությունները, որոնց ազդեցության ոլորտում է գտնվում: Այդ արտահայտվում է ոչ միայն հնչյունական մակարդակում ի հայտ եկող երևույթներով, այլ ձևավորում է նաև տարբեր բառաձևեր: Ուշագրավ է այդ առիթով ակադ. Գ. Սևակի դիտողությունը: «Այսպես, մինչդեռ արտասահմանի հայերը ցեմենտ իմաստով գործածում են մերթ *սըմեն* ֆրանսիական ձևը, մերթ *չեմենտո* իտալական ձևը, *պարտիզան* իմաստով՝ մերթ *բարդիզան*, մերթ *փարթիզան*, նույնպես նաև՝ մերթ *սենֆոնի*, մերթ *սեմֆոնի*, մենք հետևելով ռուսերենի օրինակին՝ գործածում ենք *ցեմենտ*, *պարտիզան*, *սիմֆոնիա* կայուն ձևերը»²: Մի կողմ թողնելով հիշյալ երևույթը ծնող պատճառները՝ այնուամենայնիվ արձանագրենք, որ այն արևմտահայերենում իրոք ունի զգալի տարածում: Սովորաբար արևմտահայերենը ձգտում է հավատարիմ մնալ ֆրանսերեն ձևերին՝ հատկապես աշխատելով ճիշտ արտահայտել հնչյունական-արտասահմանական կողմը: Ընդ որում սա վերաբերում է ոչ միայն լատինական-ֆրանսիական ծագում ունեցող բառերին, այլ նաև ֆրանսերենի միջնորդավորմամբ այլ լեզուներից կատարվող փոխառություններին: Ներքոհիշյալ օրինակները ասվածի լավագույն ասպացույցն են (նախապես տրվում են արևելահայերեն ձևերը):

Ալկոհոլ-ալքոլ (ծագում է արաբ. *al-kuhl* ձևից, իմաստը՝ նուրբ փոշի): Արևմտահայերենը վերցրել է ֆրանսերենի (*alcool*), արևելահայերենը՝ ռուսերենի (*алкоголь*) ձևը՝ համապատասխան հայացմամբ:

Ակացիա-արասիա (այս դեպքում ևս ունենք ֆրանսերեն (*agacia*) և ռուսերեն (*акация*) ձևերի հակադրություն):

Ավտո-օթո (հուն. *autos* արմատը հայերեն բաղադրություններում գործածվում է հետևյալ իմաստներով. 1. **Ինքն**, իր, սեփական (ավտոռեֆերատ), 2. **Ինքնակա**, **ինքնիրեն** (ավտոմատացում), 3. **Ավտոմոբիլ** (ավտոմաս, ավտոկայան): Արևելահայերենը սովորաբար այս արմատը թարգմանում է **ինքն** հայերեն համարժեքով՝ **ինքնագիր**, **ինքնահոս**, **ինքնավար** և այլն, սակայն բազմաթիվ գիտատեխնիկական եզրերում պահպանում է ավտո ռուսական ձևը՝ **ավտոբեռնիչ**, **ավտոգեն**, **ավտոգնացք**, **ավտոդող**, **ավտոկլան** և այլն: Արևմտահայերենը տալիս է նաև նման հաջող թարգմանությունների հավելյալ օրինակներ՝ **ինքնաշարժ**, **ինքնաձիգ** (զենք իմաստով), զուգահեռաբար գործածելով նաև ֆրանսերեն ձևը՝ **օթոպիս**, **օթոմաթիք**, **օթոմոպիլ** և այլն:

Գիլյոտին-կիլյոթին (ծագում է ֆր. *guillotine*՝ *գլխատման մեքենա* բառից): Արևմտահայերենը վերցրել է բնագրի արտասահմանական ձևը, ռուսերենը՝ գրային, որը և անցել է արևելահայերենին:

² Գ. Սևակ, Հայոց լեզվի դասընթաց, Եր., 1955, էջ 9: Ընդհանուր առմամբ համաձայն լինելով արտահայտված մտքին, կարծում ենք, որ մասնավորապես չեմենտո ձևը խոսակցական արևմտահայերենում ոչ թե անմիջական փոխառություն է իտալերենից, այլ փոխառվել է թուրքերենի միջնորդավորմամբ՝ չիմանթո՝ ձևով:

Գլիցերին-կլիսերին (ծագում է հուն. *klikeros` քաղցր բառից*): Արևմտահայերենը փոխառությունը կատարել է ֆրանսերենի, արևելահայերենը՝ ռուսերենի միջնորդավորմամբ:

Դրամա-տրամ (հուն. *drama* բառն է, որի ֆրանսերեն արտասանությունն էլ վերցրել է արևմտահայերենը՝ *drame*, դ-տ գրությունը կապվում է խոյ հնչյունների ձայնեղ արտասանության հետ): Արևելահայերենը վերցրել է ռուսական ձևը, որ նույնական է հունարեն գրության հետ:

Լաբորատորիա-լապորաթուար (միջին լատիներեն *laboratorium* բառից): *Labvore-աշխատել*, որտեղից էլ արևմտահայերենը ստեղծել է բառի *աշխատանոց* հայերեն տարբերակը: Թե՛ բառաձևերը և թե՛ նրանց հնչյունական կազմը դարձյալ ցույց են տալիս, որ արևմտահայերենը նախընտրում է ֆրանսիական ձևը, իսկ արևելահայերենը՝ ռուսական:

Մեդայ-մետայլ (արևմտահայերենը պահում է ֆր. *me'daille* բնագրային արտասանությունը, արևելահայերենը ընդունում է ռուսական ձևը, որ գալիս է գրությունից): Դ-ի փոխարեն տ-ի գրությունը կապվում է տեղաշարժ-տեղափոխության կանոնի հետ:

Շինպանզե-շեմբանզե (դարձյալ արևմտահայերենը պահում է ֆրանսերեն բնագրի (*chimpanze'*) արտասանությունը, իսկ արևելահայերենը՝ ռուսական ձևը):

Տիպ-թիբ (հուն. *tipos` ձև, նմուշ* բառն է, որի ֆր. ձևը՝ *tipe*, որդեգրել է արևմտահայերենը՝ կատարելով համապատասխան հնչյունափոխություն): Այս դեպքում ևս արևելահայերենը հավատարիմ է մնում ռուսական ձևին, ուր հունարենի -os մասնիկի անկումը սովորական է. հմմտ. Հունարու-Гомер, Սիզիփոս-Сизиф, Աքիլես-Ахил և այլն:

Տրուբադուր-թրուպատուր (ֆր. *troubadour* - երգիչ-բանաստեղծ): Արևմտահայերենը ֆրանսերեն արտասանությունը պահելու համար ընդունում է գրության վերոհիշյալ ձևը, արևելահայերենը՝ ռուսերենի ձևը:

Ինչպես նկատում ենք, արևելահայերենը փոխառություններ կատարելիս հետևում է ռուսերենին, որի հետևանքով հաճախ աղճատվում է բառի բնագրային արտասանությունը, քանի որ ռուսերենի հնչյունական կազմը ոչ միշտ է ի գործում ամբողջությամբ արտահայտելու տարբեր լեզուների հնչյունական համակարգերը: Նման դեպքերում հայերենն օգտագործում է իր հնչյունական համակարգի հարուստ հնարավորությունները՝ վերականգնելու համար բնագրային արտասանությունը: Ինչ խոսք, այնուամենայնիվ, իբրև գլխավոր սկզբունք մնում է ռուսերենի ձևերը նույնությամբ ընդունելը, որ հաճախ շատ է հետանում բնագրից, հմմտ՝ *ավիացիոն* - *ավիասիոն*, *բուֆետ-պիֆե*, *Մառ-ձգե-Դուն* - *Մառ-Ձե-Տունկ*...

Արևմտահայերենը կազմավորման առաջին շրջանից սկսած մինչև ձևավորման ավարտը գտնվել է ֆրանսերենի ազդեցության ոլորտում: Նույն վիճակում էր նաև թուրքերենը, որն օգտվելով պետական լեզվի կարգավիճակից՝ իր հերթին յուրովի ազդում էր արևմտահայերենի (հիմնականում խոսակցական տարբերակի) վրա: «Տաճիկ գրականությունը այնքան ողորմելի էր, որ ամբողջ էր համարվում նրանով զբաղվել, - գրում է Հր. Աճառյանը, - իսկ ֆրանսերենը ռուսման կատարելագույն աստիճանն էր համարվում: Բոլորը սիրում էին այդ լեզուն. կրթված մարդը ֆրանսերեն պիտի իմանար կարողալ ու քիչ թե շատ խոսել: Ֆրանսիական հին ու նոր գրականության բոլոր ընտիր երկերը Պոլիս և գավառական կարևոր կենտրոններն են թափանցում, Պոլսում նույն իսկ ֆրանսերեն լրագիր էր հրատարակվում... Կազմվեցին մեծ ու փոքր ամեն տեսակ բառարաններ հայերենից ֆրանսերեն ու ֆրանսերենից հայերեն: Գիտական բոլոր տեսակի գրքերը կազմվում էին միշտ այս կամ այն ֆրանսիացի հեղինակի հետևողությամբ, եթե ո՛չ թարգմանությամբ: Մի խոսքով հայ մտավոր, գրական ու գիտական կյանքը զգալի չափով գտնվում էր ֆրանսիական գրականության ազդեցության տակ»³:

³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, Եր., 1951, էջ 572:

20-րդ դարը և մանավանդ նրա 2-րդ կեսը նշանավորվեց անգլերենի համաշխարհային լեզու դառնալու միտումներով, որով բնականաբար հետին պլան էին մղվում այլ լեզուների (ռուսերեն, ֆրանսերեն, գերմաներեն, իսպաներեն և այլն) նմանատիպ նկրտումները: Նույնիսկ այնպիսի մի երկրում, ինչպիսիս Լիբանանն է, ուր ֆրանսերենը երկրորդ պետական լեզվի և միջազգային տնտեսական ու մշակութային հաղորդակցությունների հավակնություններ ուներ, վերջին տասնամյակներում անգլերենը սկսում է գերիշխող դիրքեր գրավել: Սա, ինչ խոսք, ունի բազում պատճառներ և, ամենից առաջ, կապվում է ԱՄՆ-ի քաղաքական, տնտեսական ու մշակութային գերիշխանության հետ ամբողջ աշխարհում: Նմանատիպ ազդեցությունից գերծ չմնաց նաև արևմտահայերենը: Այսօր վստահաբար կարելի է ասել, որ անգլերենը աստիճանաբար արևմտահայերենի նկատմամբ ձեռք է բերում նույն ազդեցությունը, ինչ ժամանակին ուներ ֆրանսերենը: Փոխառություններ կատարելիս արևմտահայերենը, բացի մի քանի ֆրանսախոս գաղթօջախներից, այսօր առաջնորդվում է անգլերենի լեզվական առանձնահատկությունների հաշվառումով: Այսպես, աշխարհահռչակ գիտնական Էյնշտեյնի ազգանունը տառադարձվում է անգլերենում ընդունված ձևով՝ Այնշթայն, լազեր (laser) - լեյզեր (օպտիկական սարքի անվանումը)⁴, Վալենտին-Վալանթայն, Տիտանիկ-Թայթանիկ և այլն:

Ստորև բերում ենք հարյուրներով հաշվվող համանման բառերից մի քանի նմուշ, որոնք երկու տարբերակներում դրսևորում են ուղղագրական տարբերություններ՝ տարբեր լեզուների ազդեցության ոլորտներում գտնվելու պատճառով:

Արթիստ (արտիստ), արշիվ (արխիվ), եզուիտ (ճիզվիտ), գեո (զրո), գինկ (ցինկ), էքոբե (էպոպեա), թեորի (թեորիա), ճելաթին (ժելատին), կանգուրու (կենգուրու), կենդինար (ցենտներ), կիկլոն (ցիկլոն), կվարո (կվարց), մոմիա (մումիա), շոքուա (շոկուադ), պրիսմակ (պրիզմա), սինիկ (ցինիկ), սթերլին(կ) (ստեռլինգ), սիոր (պպորտ), սօս (սոուս), տալեր (դոլար), տոամ (դրամա), ուաթ (վատտ), քոլերա (խոլերա), ֆրանք (ֆրանկ):

Հայաստանի անկախացումից հետո, երբ անմիջական կապեր հաստատվեցին աշխարհի տարբեր երկրների հետ, արևելահայերենը մասամբ ձերբազատվեց ռուսերենի ազդեցության ոլորտում գտնվելու պարտադրանքից, ի հայտ եկան նոր լեզվական շփումներ և աղերսներ, որոնք չէին կարող իրենց հետքը չթողնել լեզվական ամենատարբեր դրսևորումների վրա:

Դ. Հունարենից փոխառյալ բառերում գրաբարյան որոշ հնչյունների (լ-ի փոխարեն դ և ֆ-ի փոխարեն փ) գրության պահպանում արևմտահայերենում: Հայտնի է, որ գրաբարը չունի ֆ գիրը. այն հայերենում ներմուծվել է միջնադարում: Այդ իսկ պատճառով հունարենի ֆ հնչյունը հայերենում փոխարինվում էր փ-ով, ինչպես օրինակ՝ philosophos-փիլիսոփա, philosophia-փիլիսոփայություն, Aphrodite-Ափրոդիտե, phoinix-փյունիկ և այլն: Արևելահայերենը հիշյալ ֆ-ի դիմաց փ-ն պահում է սակավ դեպքերում, այն էլ սուկ հնագույն բառաձևերում, ինչպես՝ փիլիսոփա, Փավստոս, Փոյուգիա, փասիան ...

Արևմտահայերենում ֆ-ի փոխարեն փ-ն պահող բառերի թիվը շատ ավելի մեծ է. դրանց մեջ մտնում են նաև արևելահայերենում այս կանոնին ենթարկվող բառերը՝ դելֆին-դելփին-դեղփին, սադաֆ-սատափ, Աֆրիկա-Ափրիկե, ամֆիթատրոն-ամփիթատրոն, Բոսֆոր-Վոսփոր և այլն:

Հին հայերենն ուներ երկու լ հնչյուն՝ առաջնալեզվային և կատկային: Վերջինս մաշտոցյան այբուբենում արդեն հանդես է գալիս իբրև դ: Այս երկու հնչյուն-

⁴ Սա անգլերեն հապավում է՝ Light amplification by stimulated emission of radiation, որ նշանակում է՝ Լույսի ուժեղացում հարկադրական ճառագայթման օգնությամբ (ջվանտային գեներատոր). արևմտահայերեն հորջորջվում է լեյզեր:

ները հաճախ միևնույն բառի մէջ հաճախ էին գալիս իբրև լծակից հնչյուններ՝ ջիլ-ջիղ, աղի-անալի: Արևելահայերենում այս բոլոր հնագույն ձևերը, բացի բանաստային տարբերությունը Արևկայացնողներից, տառադարձվում են լ-ով, ուստի կարելի է ասել, որ լ-ը աղերսը կորել է, և երկու լ-երը դադարել են առանձին հնչույթներ Արևկայացնել: Արևմտահայերենը ավանդապահ է նաև այս հարցում. այն պահում է դ տառի գրությունը հնուց ավանդված բոլոր ձևերում, ինչպես երևում է հետևյալ օրինակներում. Ալեքսանդր-Աղեքսանտր, արշիպելագ-արշիպելագոս, Գալլիա-Գաղղիա, դելֆին-դելփին, դկուլ-դկուղ, Ելիսեյան դաշտեր-Եղիսեյան դաշտեր, ելուզակ-եղուզակ, լակիշ-ղակիշ, լամպար-ղամպար, խլվրտյուն-խղվրտիւն, Պլատոն-Պղատոն, Պլուտոն-Պղուտոն, Օլիմպոս-Ողիմպոս, օլիմպիադա-ողիմպիատ, օլիմպիական-ողիմպիական և այլն:

Ըստ երևույթին հունարենի ազդեցության հետ պետք է կապել նաև արևելահայերենում բառասկզբում է-ով արտասանվող մի քանի բառերի է-ով գրությունը արևմտահայերենում՝ Ելլադա, Ելլադական, Եպիկուր, Եպիկուրեան, ինչպես նաև Էլեկտր- արմատով կազմված բազմաթիվ բառեր՝ Էլեկտրաբար, Էլեկտրաբեր, Էլեկտրաբոյժ, Էլեկտրագէտ, Էլեկտրադէտ, Էլեկտրալամբ, Էլեկտրալար, Էլեկտրածին...:

1ե. Երկհնչյունների հնչյունափոխության հետ կապված տարբերակներ:

Այս խմբի մեջ ընդգրկել ենք այն դեպքերը, երբ արևելահայերենում կամ արևմտահայերենում նկատվում են երկհնչյունների շեղումներ հնչյունափոխական ընդհանուր կանոններից:

Դրանցից առաջել ընդհանրական բնույթ ունեն այ երկհնչյունի փոփոխությունները: Հանրահայտ է, որ այս երկբարբառը արևելահայ բարբառներում դառնում է է(ե). այլ-էլ, այս-էս, այնքան-էնքան, գայլ-գել, հայր-հեր, մայր-մեր, քայլել-քելել և այլն: Արևմտահայ բարբառներում այ-ը հնչյունափոխվելիս տալիս է ա. այս-աս, այն-ան, այլ-ալ, հայր-հար, մայր-մար, քայլել-քալել և այլն:

Կան նաև երկհնչյունների հնչյունափոխական մի շարք շեղումներ, որոնք կրում են մասնավոր բնույթ և կապվում են կոնկրետ բառաձևերի հետ: Այսպես, արյուն ձևույթի յու երկհնչյունը արևելահայերենում բառաբարդման ժամանակ կամ մնում է անփոփոխ և կամ սղվում է (արյունաբբու և արնամամն), մինչդեռ արևմտահայերենում վկայված են նաև յու-յա (իւ-եա) հնչյունափոխությամբ կազմվող ձևեր՝ արնագույն-արեանագույն, արնագին-արեանագին, արյունապաշտ-արեանապաշտ: Հանդիպում են նաև արենագոյն, արենագին, արենակաթ, արենակից, արենաչափ, արենապաշտ, արենխում բառաձևերը, որոնք ակնհայտորեն կազմված են արյուն բառի սեռականից՝ եա-ե ընդհանրական հնչյունափոխությամբ:

Ույ-ու (ոյ-ու) ընդհանրական հնչյունափոխությունը արևելահայերենում ունի չնչին բացառություններ (քույր, դույլ, նույն և այլն): Մակույկավար, առույգություն, խարույկահանդես, կապույտանալ, թույնել անհնչյունափոխ ձևերի փոխարեն արևմտահայերենը տալիս է մակուկավար, մակուկել, առուգաբար, առուգութիւն, խարուկել, խարուկահանդես, կապուտնալ, թունել հնչյունափոխված ձևերը:

Արևելահայերենում նկատվում են նաև շեղումներ յա-ե (եա-ե) ընդհանրական հնչյունափոխությունից: Այսպես, արևելահայերենում սովորական են արբանյականավ, սենյակային, ժանյակագարդ անհնչյունափոխ ձևերը, որոնց դիմաց արևմտահայերենը միանշանակ ունի արբանեկանավ, սենեկային, ժանեկագարդ բառաձևերը:

Արևմտահայերենը պահում է նաև ոյ և եա երկբարբառ պարունակող բառերի նախկին գրությունը՝ անոյժ, անոյշ, այտոյց, մեղոյշ, ախոյեան, դայեակ, հայեացք, մայեաթ, Մայեաթ, ցորեան և այլն:

1գ. Տարբերություններ, որոնք կապվում են փոխազդեցական հնչյունափոխության տարբեր դրսևորումների հետ: Մասնավորապես ամփոփում (հապլոլո-

գիտ) կոչվող հնչյունափոխության դեպքերը, որ Հր. Աճառյանն անվանում է արագաբանություն, միանշանակ չեն գործում լեզվի երկու տարբերակներում, այսինքն երևույթը դրսևորվում է տարբեր բառերում: Արևելահայերենում աշխարհահայացք բառը ամփոփման հետևանքով դարձել է աշխարհայացք, իսկ արևմտահայերենում այս բառը նման հնչյունափոխության չի ենթարկվում՝ աշխարհահայացք: Աճձնանուէր բառը արևելահայերենում ամփոփման հետևանքով դարձել է անձնվեր, իսկ արևմտահայերենում մնացել է անփոփոխ: Արևմտահայերենն ունի գրականական բառը, որ արևելահայերենում նույն պատճառով դարձել է գրական: Կան նաև հակառակը վկայող երևույթներ, երբ հնչյունափոխական այս երևույթը դրսևորվում է միայն արևմտահայերենում: Արևելահայերենի աշնանավար, աշնանացան, էլեկտրականաճալ, նամակակցել, ջրհորդան բառերի դիմաց արևմտահայերենը գործածում է աշնցան, աշնավար, էլեկտրականալ, նամակցել, ջրորդան (նաև ջրորդան) հնչյունափոխված ձևերը:

Նկատվում են նաև առնմանման և տարմանման տարբեր բառերում ի հայտ գալու փաստեր: (Ի դեպ, հիշյալ հնչյունափոխական երևույթի՝ ձայնավորների նկատմամբ դրսևորումը անվանում են նաև ձայնավորների ներդաշնակություն՝ սինհարմոնիա): Ահա նման բառերի մի քանի օրինակներ արևմտահայերենում և արևելահայերենում՝ երախայ-երեխա, երեշտ-երաշտ, երագ-արագ, շաղգամ-շողգամ, ցորեկ-ցերեկ և այլն: Հնչյունափոխության այս տեսակը լայնորեն դրսևորվում է արտասանության պլանում: Սակայն ինչպես վերոբերյալ օրինակներում է երևում, առնմանման և տարմանման հետևանքով առաջանում են նոր բառաձևեր, որոնք հետագայում սկսում են համարվել կանոնական ձևեր: Հանրահայտ է Պ. Դուրյանի ստեղծագործության հետ կապված օրինակը. «Թէ կոյսը չ'ըլլար մաքուր ու ամբիծ...»: Հեղինակային գրության այս տարբերակը հետագայում օրինականացվել է, և այսօր արևմտահայերենի բոլոր բառարանները այս ձևը համարում են կանոնական և ընդունելի: Ավելին, ՀԼՆԲ-ն անբիծ բառը հղում է ամբիծ-ին՝ վերջինս համարելով միակ ընդունելի ձևը: Պատճառը ք երկշրթնայինի ն ազդեցությամբ և առաջնալեզվայինի երկշրթնայնացումն է, որի հետևանքով կատարվել է Գ-մ հնչյունափոխությունը: Ասվածը հավասարապես վերաբերում է ամբաւ բառաձևին, որի մեջ առկա է նույն հնչյունափոխական երևույթը: Ամբարիշտ բառը արևմտահայերենում հանդիպում է նաև անբարիշտ և անպարիշտ ձևերով, սակայն բառարանները նախընտրությունը տալիս են ամբարիշտ-ին:

Նույն բառարանը ամպ-ամբ (մ ձայնորդի ազդեցությամբ խոլ պ-ի ձայնեղացում) բառաձևերը տալիս է զուգահեռաբար՝ ընդունելով դրանց հավասարազոր գոյության իրավունքը:

Ուշագրավ են դրափոխության հետ կապված երևույթները: Որքան էլ տարօրինակ է, արևմտահայերենի բառարանները, զանց առնելով պատմական հնչյունափոխության առկա փաստերը, դեռևս շարունակում են սխտոր և կարպետ բառերը ներկայացնել խստոր և կապետ⁵:

⁵ ՀԼՆԲ-ն (Գնել արք. Մերեճեան, Փարսնազ Տօնիկեան, Արտաշէս տէր Խաչատուրեան, Հայոց լեզուի նոր բառարան, 2 հատորով, Պելյուր, 1992) տալիս է ոչ միայն կապետ ձևը, այլև դրանից կազմված կապետագործ, կապետագործություն, կապետակ և կապետիկ բառերը, իսկ կարպետ ձևը հղվում է կապետ-ին, դրանով իսկ չընդունելով Գրա գոյության իրավունքը: Խստոր բառը հղվում է սխտոր-ին, իսկ սխտորը բնութագրվում է իբրև բույս: Սա բացատրվում է Գրանով, որ հիշյալ բառերը գտնվում են բառարանի I և II հատորներում, որոնք կազմել են տարբեր հեղինակներ, ուստի բացակայում է միասնական մոտեցումը: Այս բառերի երկու ձևերն էլ զուգահեռաբար տրվում են նաև այլ բառարաններում: Տե՛ս, օրինակ, Անդրանիկ վրդ. Կոստեան, Գործնական բառարան հայերեն լեզուի, Պելյուր, «Շիրակ» հրատ., 1987, Թ. Թ. Փայայեան, Բառարան գանձարան հայերեն լեզուի, Պելյուր, 1983:

Սա, ինչ խոսք, արդարացում չի կարող ունենալ, քանի որ մեխանիկորեն բառարանից բառարան են փոխանցվում արդեն հնաքան, մահացած բառաձևերը:

Դրափոխության հետաքրքիր դեպք է գոյա բառը: Այն մեկնաբանվում է հընչյունափոխական հետևյալ հաջորդականությամբ. տարգալ-տրգալ-տգալ-դգալ-գդալ: Նախավերջին ձևը արևմտահայերենում այժմ գործածական միակ ձևն է, մինչդեռ արևելահայերենում կատարվել է ևս մի հընչյունափոխություն: Դրափոխության հետևանքով բառասկզբի դ-ն և գ-ն իրենց տեղերը փոխել են՝ ձևավորելով գդալ բառը:

Դրափոխության հետևանքով արևելահայերենում և արևմտահայերենում առաջացել են նաև հետևյալ զույգերը. եղևիմ-եղևնի, գրուցել-գուրցել, թեպուր-փետուր, կակաո-քոքոա, կրճիմ(ն)-կճրիմ, ճուռայ-ճպուռ, նախշ-նաշխ, շիհնք-շըլ-հիք, մախր-մախխ, ձգել-զցել, վլվլիկ-լվլվիկ, տտուն-տուտն:

Ձգել օրինակում գործ ունենք նաև բառիմաստի փոփոխության հետ. այս բառը արևմտահայերենում նշանակում է թողնել (գործը ձգել), իսկ արևելահայերենում՝ քաշել (պարանը ձգել):

Հետաքրքիր է սորվիլ բառի հընչյունափոխությունը: Այն կազմված է սովոր արմատից, որի բառամիջի ո-ն ընկել է միջինհայերենյան հանրահայտ հընչյունափոխության հետևանքով, երբ բառի մեջ կան մեկից ավելի ո-եր: Այնուհետև դրափոխության հետևանքով վ և ր հընչյունները փոխել են իրենց տեղերը՝ ստեղծելով նաև ուղղագրական բացառություն (այս դիրքում վ հընչյունը ըստ ուղղագրական կանոնի պետք է արտահայտվեր ու տառով):

Արժե նշել, որ պատճառական բայերի եզակի հրամայականների տարբերությունը արևելահայերենում և արևմտահայերենում դրափոխության հետևանք է. արևմտահայերենն անփոփոխ է պահել գրաբարյան ձևը՝ մոտեցու՛ր, իսկ արևելահայերենում այն դարձել է մոտեցրու՛:

Հընչյունի հավելման և կորստի մի շարք դեպքեր են նկատվում երկու տարբերակների համեմատական քննության դեպքում: Լեզուն հաճախ բառի մեջ հավելում է ն հընչյունը: Նման բառաձևերը արևմտահայերենում գրականացել են, դարձել կանոնական ձևեր, մինչդեռ արևելահայերենում դրանք ընկալվում են որպես ակնհայտ բարբառային ձևեր: Այսպես՝ կանանչ և այդ արմատով կազմված (կանանչագեղ, կանանչագարդ, կանանչագուրկ, կանանչանալ, կանանչապատ, կանանչացում, կանանչավետ, կանանչավուն, կանանչեղէն, կանանչեցնել, կանանչնալ, կանանչցնել, կանանչկեկ, կանանչկոտ, կանանչութիւն, կանանչորակ) բառերում ն-ի հավելումը կապվում է հարատւություն կոչվող հընչյունափոխական երևույթի հետ: Արևելահայերենում հիշյալ բառաձևը հանդիպում է Հ. Թումանյանի մոտ (Է՛յ, կանանչ ախպեր, Է՛յ, ճանանչ ախպեր...), ուր այն մերվում է թումանյանական ընդհանուր լեզվագործածությանը:

Արևմտահայերենում նման կազմություններ են նաև մենծ, ծղուտ, փախնեփախ բառաձևերը, որոնցից միայն առաջինն է հանդիպում արևելահայ բարբառներում:

Ճածր բառի դեպքում ունենք հակառակ երևույթ. գրաբարյան ցած բառը արևելահայերենում բարձր բառի համաբանությամբ դարձել է ցածր, որ հանդես է գալիս նաև բաղադրություններում (ցածրանալ, ցածրացնել և այլն): Արևմտահայերենը այս բառը չի հընչյունափոխում և պահում է ցած ձևը նաև բաղադրություններում (ցածնալ, ցածորակ, ցածություն):

Արևմտահայերենում սովորական են սանտր նաև սանտրագործ, սանտրել սանտրուածք, սանտրուիլ բառաձևերը, որ արևելահայերենում գործածվում է առանց տ հընչյունի՝ սանր, սանրել և այլն: Առաջին հայացքից թվում է, թե

՝ Տե՛ս Ս. Ղազարյան, Միջին հայերեն, գիրք Ա, Եր., 1960, էջ 192-193:

արևմտահայերենը հավելել է **տ** հնչյունը մանր-մանր, **ծանր-ծանր** և մնան բառերի համաբանությամբ, ուր իրար հաջորդող երկու ձայնորդների միջև հավելվում է **տ** պայթական՝ դյուրացնելու համար արտասանությունը: Սակայն իրականում կատարվել է հակառակ երևույթը. արևմտահայերենը պահել է բառի նախնական ձևը (ապացույց՝ սանտերք բառը), իսկ արևելահայերենում տ-ն սրղվել է՝ իբրև հավելում: Այս երևույթի մանրամասն բացատրությունը տալիս է Հր. Աճառյանը. «...արևելյան գրականում ոմանք երբեմն գրում են սանր, պատճառաբանելով որ ինչպես ծանր, մանր գավառական ձևեր են, որոնց գրականն է ծանր, մանր., նոյնպես սանտր գավառական է, որի գրականն է սանր: Ուրիշներ էլ մտածում են, որ ինչպես հնագույն ծանր, մանր ձևերից յառաջացել են յետոյ ծանր, մանր, նոյնպես և գրք. սանտր յառաջացած պիտի լինի հնագույն *սանր ձևից: Երկու կարծիքն էլ սխալ է. 1) սանտր գավառական ձև չէ և կարելի չէ համեմատել գտ. ծանր, մանր բառերի հետ. 2) ն և ր բաղաձայնների միջև արդարև ապագայում ներմուծվում է ատամնական..., բայց այդ ատամնականը լինում է դ և ոչ տ»⁷:

Արևմտահայերենը հետևողական չէ ն վերջնահնչյուն ունեցող բառերի հնչյունափոխության մեջ: Թե՛ թվականության և թե՛ բառակազմության մեջ հանդիպում են բազմաթիվ շեղումներ ընդհանուր կանոնից. ն վերջնահնչյունը ոչ միշտ է վերականգնվում. ավանդական ձևերի հետ հանդիպում են աշխարհաբարյան օրինաչափությամբ (առանց **ն**-ի վերականգնման) ձևեր⁸: Որոշ դեպքերում անհետևողականությունն ակատվում է նաև բառակազմության մեջ: Այսպես՝ եզ բառով կանոնական եզնային ձևի հետ հանդիպում է նաև եզարած ձևը, որն արմատով արևելահայերենը միշտ կազմում է ավանդական ձևեր (**ն**-ի վերականգնումով՝ որմնակար, որմնաքանդակ և այլն), մինչդեռ արևմտահայերենի համար սովորական են որմնակար, որմնակարչություն, որմնավաճակ, որմնաքանդակ բառերը:

Անդրադառնալով հիշյալ հարցին՝ Ա. Սարգսյանը արձանագրում է **ն**-ի վերականգնման անհետևողականությունը արևմտահայերենում. «Այդ խոսում է այն մասին, որ արևմտահայերենը բառակազմության մեջ «ավանդապահ» է, ձևաբանության մեջ՝ ավանդախախտ և միօրինակության կողմնակից»⁹: Այս ամենը վկայում են, որ արևմտահայերենում մի շարք բառերի **ն** վերջնահնչյունի վերականգնման հարցը վերջնականապես չի կանոնարկվել. զուգահեռաբար գործում են թե՛ գրաբարյան և թե՛ աշխարհաբարյան օրինաչափությունները:

Արևելահայերենի մրսել բառի դիմաց արևմտահայերենն ունի մսիլ ձևը, որ արձանագրված չէ ՆՀԲ-ում, սակայն վկայված է մի շարք բարբառներում¹⁰:

Ոգի արմատով կազմված մի շարք բառերում արևելահայերենը հավելում է **ն** հնչյունը (հոգի) հակառակ արևմտահայերենի, որ արմատը պահում է անփոփոխ: Արևմտահայերենի ոգեզմայլ, ոգեկան, ոգեկանություն, ոգեպարար, ոգեպնդել, ոգեպնդիչ, ոգեպնդուիլ և բազմաթիվ մնալ բառերը արևելահայերենում հանդես են գալիս **ն**-ի հավելումով՝ հոգեզմայլ, հոգեկան, հոգեկանություն, հոգեպարար, հոգեպնդել, հոգեպնդիչ, հոգեպնդուիլ: Ինչ խոսք, այս բառերից մի քանիսը կարող են ունենալ իմաստային նույն տարբերություններ:

⁷ Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. IV, Եր., 1982:

⁸ Ասվածը լավագույնս կարող է հաստատել Դ. Վարուժանի հանրահայտ տողը. «Եղեզնյա գրչով երգեցի *հարսեր*»: Բերում ենք օրինակներ այլ հեղինակներից՝ *մատեր* - Ե. Օտյան (Ընկեր Բ. Փանջունի, Եր., 1989, էջ 24), Հ. Մանուրի (Երկեր, Եր., 1986, էջ 80), *հարսեր* - Ե. Օտյան (էջ 140), Հ. Մանուրի (էջ 4), *նուներ* - Հ. Մանուրի (էջ 25), *ճուկեր* - Հ. Մընձուրի (էջ 288), Ե. Ծահնուր (Երկեր, Եր., 1965, էջ 225), Համաստեղ (Հայրենի լեռներու արճագհարը, Եր., 1989, էջ 133), *մուկեր* - Համաստեղ (էջ 127-128) և այլն:

⁹ Ա. Սարգսյան, Արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ, Եր., 1985, էջ 174:

¹⁰ Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. III, Եր. 1977:

Պատշգամք պահլավական փոխառությունը արևմտահայերենում հանդիպում է պատշգամ ձևով: Հր. Աճառյանը, փաստելով այս բառի զուգաձևությունը, գրում է. «Նոր գրականի մեջ ընդունուած է պատշգամ «balkon կամ շահնիշիր» (արևմտեան բարբառ), պատշգամք (արևելեան բարբառ)»¹¹: Բարբառային այս տարբերություններն էլ հետագայում նույնությամբ արտացոլվել են երկու գրականներում:

1է. Միջին հայերենից եկող հնչյունափոխական երևույթներ:

Հայերենի այս փուլին վերաբերող մի շարք հնչյունափոխական երևույթներ ցույց են տալիս, որ դրանք ունեն բարբառային ծագում: Հիշյալ երևույթները պայմանավորված են և՛ հայերենի շեշտով, և՛ մի շարք այլ գործոններով՝ բառի մեջ հնչյունի գրաված դիրքով, գրաբարի հնչյունական որոշ օրինաչափություններով, օտար լեզուների ազդեցությամբ: Հնչյունափոխական այս երևույթների մեջ առավել լայն տարածում ունեն ա ձայնավորի հետ կապված փոփոխությունները, որոնք արևմտահայերենում գործում են և կանոնական ձևեր են դիտվում: Դրանք, ըստ պրոֆ. Ս. Ղազարյանի, միջին հայերենում ներկայացնում են հետևյալ օրինաչափությունները. «Ա հնչյունը ընկնում էր՝ ա) Խոսակցական լեզվից գրականության մեջ ներթափանցած բոլոր բառերում, եթե գտնվում էր շեշտից դուրս և քերականական որևէ իմաստ չէր արտահայտում. այսպես, օրինակ՝ վաճուկան (վաճառական), առջի (առաջի), արծող (արածող), անվնել (անվանել), հաւասար (հաւասար)... բ) Պատճառական բայերի ածանցում (ուցան), որը կապված էր նաև նման տիպի բայերի կազմության եղանակի և գլխավորապես անցյալի հիմքի ց-ի անկման հետ, օրինակ՝ անեցնել (անեցուցանել), ամրացնել (ամրացուցանել)... գ) Ան սուկածանց ունեցող բազմավանկ բայերում. ինչպես՝ հասանել-հասնել, հարցանել-հարցնել, անցանել-անցնել, սպանել-սպաննել, մտանել-մտնել, տեսանել-տեսնել»¹²: Թեև նման հնչյունափոխությունը խորթ չէ նաև արևելահայերենին, սակայն արևմտահայերենում այն ընդգրկում է բառերի ու բառաձևերի առավել լայն շրջանակ: Դրանցից առաջինը կապվում է բազմավանկ բառերի փակ վանկի ա ձայնավորի սղման հետ վերջընթեր դիրքում. անլի, անպարտկելի, գիշերնոց, թաթխել, կատղիլ, կարկտան, կարկտել, կարկտնել, կարճնալ, հարսնիք, մատնի, շալկել, շապիկցու, ողջմիտ, ոսկինոց, պակսիլ, պակսորդ, պահկութիւն, տասնոց, տապկել, տապկուիլ, տոպրակցու, փաթթել, քսանոց և այլն:

Միջին հայերենին բնորոշ հնչյունափոխական այս երևույթները նկատելի են նաև արևելահայերենում, ինչպես՝ գտանել-գտնել, մտանել-մտնել, տեսանել-տեսնել և այլն: Այդ մասին Ս. Ղազարյանը գրում է. «Ժամանակակից հայերենում ան ածանցը չի հնչյունափոխվում ա խոնարհման բայերի մեծ մասում, բայց միջին հայերենում այդ ածանցի ա-ն ընկնում էր նաև ա խոնարհման բայերում. օրինակ՝ ազնվանալ-ազնվնալ, աղքատանալ-աղքտնալ, աղոտանալ-աղոտնալ, անմեղանալ-անմեղնալ, արդարանալ-արդրնալ, ... գողանալ-գողնալ, ... զօրանալ-զօրնալ, թացանալ-թացնալ, թուլանալ-թուլնալ...»¹³: Սակայն արևմտահայերենում այս հնչյունափոխական երևույթն ընդգրկում է առավել ընդարձակ բառաշարք՝ միանշանակորեն կազմված միայն ալ լծորդության բայերից՝ ածաննալ, գիտնալ, գէրնալ, գողնալ, լայննալ, խոշորնալ, խորնալ, խուլնալ, հասկնալ, հաստոննալ, հաստնալ, մօտիկնալ, նեղնալ, շատնալ, շեննալ, պզտիկնալ, սեւնալ, տափակնալ, տաքնալ, ցածնալ և այլն:

Ուշագրավ է, որ միջին հայերենում -ան- ածանցի հնչյունափոխության հետևանքով մի շարք -ել լծորդության բայեր վերածվում էին -ալ լծորդության

¹¹ Նույն տեղում, հ. IV, էջ 47:

¹² Ս. Ղազարյան, նշվ. աշխ., էջ 192:

¹³ Նույն տեղում, էջ 194:

բայերի, ինչպես՝ ելանել-ելնալ, տեսանել-տեսնալ, գտանել-գտնալ, որը հետագայում պատճառ դարձավ արևմտահայերենում հիշյալ բայերի լծորդական զուգաձևության՝ ելնել-ելլալ, գտնել-գտնալ, տեսնել-տեսնալ:

Պատճառական բայերում հիշյալ հնչյունափոխությունը դրսևորվում է ցն ածանցից առաջ ընկած ա և ե լծորդ ձայնավորների սդումով: Սրա պատճառն այն է, որ -ցն- ածանցը հավելվում է ոչ թե -անալ, -ենալ լծորդության բայերի վրա, այլ, ինչպես վերը տեսանք, դրանց հնչյունափոխված տարբերակների վրա (-նալ լծորդություն): Օր.՝ պատճառական ածանցը ավելանում է ոչ թե շատանալ, այլ շատնալ բայի վրա, որի արդյունքում ստացվում է շատցնել բայաձևը: Բերենք նման կազմություններից առավել բնորոշ օրինակներ. Գիրցնել, գողցնել, թեթեցնել, լայնցնել, լացնել, լոգցնել, լուսցնել, լսցնել, խուլցնել, կարմրցնել, կլորցնել, հասկցնել, նեղցնել¹⁴, նիհարցնել, շատցնել, շենցնել, տափակցնել, տաքցնել, քրտնցնել և այլն:

Բնականաբար, հիշյալ ձևերը պահպանվում են նաև այս բայերից կազմված կրավորականներում՝ հասկցուիլ, շատցուիլ, տաքցուիլ և այլն:

Միջինհայերենյան հնչյունափոխության հետևանք է նաև բառասկզբում ա-ը հնչյունափոխությունը անել, ասել բառերում, որ նույնությամբ անցել է արևմտահայերենին՝ առաջացնելով անել-ընել, ասել-ըսել զույգերը:

Անկանհիլ բառը միջին հայերենում ա-ը հնչյունափոխությամբ դառնում էր ընկնել, իսկ ա-ի հնչյունափոխությամբ՝ իյնալ¹⁵: Արևելահայերենը ժառանգել է առաջին ձևը, արևմտահայերենը՝ երկրորդ:

Մի քանի բառերում արևմտահայերենը պահել է միջին հայերենից եկող ու-ը հնչյունափոխությունը՝ ուղեղ-ըղեղ, հոնք-ունք-ընքվի:

Ջուտ արևմտահայերեն համարվող մի անորոշ դերանվան հոդով կիրառությունը, երբ ի-ն փոխվում է ը-ի (մըն), դարձյալ գալիս է միջին հայերենից: Օրինակ՝ «Ջնական ի ջրեն հանուի, ջուր մըն ալ ձգեն, նայ աարի»: Իսկ առանց հոդի կիրառվելիս ձայնավորից առաջ ը-ն սղվում է՝ փոխարինվելով ապաթարցով: Օրինակ՝ «Տեսայ իմ հոգուս հոգին, որ կ'երթար հետ մէկի մըն ալ. ձեռկունքն ի վերան ձգել, ու գանգատ կ'անէր մէկի մ'ալ»: Մի բառի հնչյունափոխական այս երևույթները նույնությամբ անցել են արևմտահայերենին:

2. Ներհամակարգային զուգաձևություններ. այս դեպքում նկատի են առնվում արևմտահայերենի ներհամակարգային (ինքն իր մեջ) ուղղագրական և հընչյունափոխական զուգաձևությունները:

2ա. Տարբեր լեզուներից զուգահեռաբար կատարված փոխառությունները ներկայացնում են հնչյունական զուգահեռ ձևեր՝ մեթր(ֆր.)-մեթրո(իտ.), թիֆուս(լատ.)-թիֆո(իտ.), ալպում(լատ.)-ալպում(իտ.) և այլն:

2բ. Շնչեղ խուլ հնչյունների երկակի գրության հնարավորությունը: Պայթական բաղաձայնների եռաստիճան համակարգի վերածվելը երկաստիճանի առաջացնում է պայթական շնչեղ խուլերի երկակի գրության հնարավորություն՝ բուն շնչեղ խուլեր (փ, ք, թ և այլն) և շնչեղ խուլ արտասանվող ձայնեղներ (բ, գ, դ և այլն), որը և պատճառ է դառնում զուգաձևության՝ խախտելով բառերի ավանդական գրությունը: Բերենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը. անհեթեթե-անհեղեղ, գամփո-գամբո, գձուձ-գձուձ-գցուց, գնդել-գնտել, դադել-տադել, դոթոշ-թոթոշ, ելակ-ելազ, երդիք-երդիկ, գանգապան-գանկապան, գերթ-գերդ, գնդան-գնտան, ընգճել-ընկճել, թակարթ-թակարդ, թաղանթ-թաղանդ,

¹⁴ Հիշյալ ձևը գործածվում է նեղ դարձնել իմաստով. վիրավորել իմաստով գործածվում է բառի անհնչյունափոխ նեղացնել ձևը: Արևելահայերենում երկու իմաստներն էլ արտահայտվում են միևնույն նեղացնել բառաձևով:

¹⁵ Տե՛ս Ս. Ղազարյան, նշվ., աշխ., էջ 196:

թանգ-թանկ, թաքուն-թագուն, թնշուկ-թնճուկ, խենդեճալ-խենթեճալ, խլիրդ-խլիրտ, խնձոր-խնձոր, խոնջան-խոնճան, ծղրիթ-ծղրիդ-ծղրիտ, կարկաչել-կարկաչել, հեք-հեգ, շողոքորթ-շողոքորդ, ջատուկ-ճատուկ, սաղարթ-սաղարդ, սիւք-սիւգ, սրունք-սրունգ, փափաք-փափագ, Փօլ-Բօլ, Փարիզ-Բարիզ, քերթող-քերդող և այլն:

2գ. Ռ-ր հակադրության վերացման հետևանքով առաջացած զուգաձևություններ: Հայտնի է, որ ժամանակակից արևելահայերենում արտասանության պլանում ու-ր հակադրությունը չեզոքացած է, ու հնչյունի արտասանությունը բոլոր դիրքերում դժվար է տարբերել ր-ի արտասանությունից՝ վերատամնայնություն - ոչ վերատամնայնություն և միաթրթոռություն - բազմաթրթոռություն հակադրությունների թուլացման հետևանքով¹⁶: Այս հանգամանքը ևս առաջացնում է ուղղագրական դժվարություններ և զուգաձևություններ, ինչպես օրինակ՝ աճխոր-աճխոռ, ապխոր-ապխոռ, արհաիրք- առհաիրք, գաղտակուր-գաղտակուռ, կանկար-կանկառ, կերոն-կեռոն, կոպար-կոպառ, ֆրանկ-ֆռանկ և այլն:

Մի քանի բաղադրություններում, ուր արևելահայերենում հանդես է գալիս երեք բառի եռ արմատական տարբերակը, արևմտահայերենը ունենում է կրկնակ ր-ով ձևեր՝ երրեակ, երրակի, երրերջանիկ:

2դ. Արմատական օ և է հնչյունները ևս մի շարք բառերում ունեն երկակի գրություն. դրանք գրվում են նաև ո և է տառերով՝ կրկին առաջացնելով ուղղագրական զուգաձևություններ՝ եղէգ-եղեգ, զեո-զեո, թեգ-թեգ, ծեթ-ծեթ, հեքեթ-հեքեթ-հեքիաթ, ովկեանոս-ովկիանոս, ինչպես նաև՝ ապխօռ-ապխոր, ապոն-ապրոն, գօշ-գոշ, գօշ-գոշ, ժոտատ-ժոտատ, լօլիկ-լոլիկ, շօթ-շոթ և այլն:

2ե. Ուղղագրական հին և նոր ձևերի զուգահեռ գործածությունը, դրանցից մեկին նախաստվություն չտալը, ինչպես օրինակ, բաղխել-բախել, ծղխնի-ծխնի, գովուրտան-գովվտան, սկայ-հսկայ և այլն:

2զ. Ուղղագրական զուգաձևություն ունեցող բառեր՝ անգեղջ-անգիղջ, գերնալ-գիրնալ, անըստգիտ-անստգիտ, դայեակ-դայեկ, խարտեաշ-խարտեշ, դիրազգած-դիրազգաց, ասպուռ-ասպուր, նարգիզ-նարգիս և այլն:

Առաջին հայացքից ներհամակարգային այս զուգաձևությունները կարող են թվալ մասնավոր դեպքեր, ինչ-ինչ բացառություններ, որոնք, ի վերջո, կարելի է կանոնարկել և դարձնել միօրինակ: Սակայն մի շարք հանգամանքներ այդ ամենը դարձնում են անհնար հետևյալ պատճառներով:

ա) Արտասանության պլանում պայթական բաղաձայնների երկաստիճան դառնալը, իսկ գրանշանների համակարգում (այբուբենում) եռաստիճան համակարգը պահպանելը առաջացնում են անհաղթահարելի արգելքներ ուղղագրության միօրինակացման գործում:

բ) Այսօր արևմտահայերենը ավելի շուտ սփյուռքահայերեն է. այն գործում է աշխարհի տարբեր հայկական գաղթօջախներում և շարունակում է իր վրա կրել տիրապետող (դոմինանտ) լեզուների ազդեցությունը՝ կրկին առաջացնելով բառաձևերի բազմազանություն:

գ) Վերջապես, յուրաքանչյուր լեզու, լինելով կենդանի օրգանիզմ, ամենօրյա շփումների մեջ է աշխարհի տարբեր լեզուների հետ, քաղաքակրթության զարգացումից ետ չմնալու համար հարկ է լինում կատարել բազում փոխառություններ: Զանգվածային լրատվամիջոցները ամեն պահի հարկադրված են լինում առնչվել բազում օտար անձնանունների և տեղանունների, որոնք հարկ է տառադարձել մայրենի լեզվով: Չունենալով տառադարձության հստակ սկզբունքներ՝ արևմտահայերենը, բնականաբար, չի կարողանում ապահովել ձևերի միօրինակություն: Մեր այս ուսումնասիրության արդյունքները, ինչպես տեսանք,

¹⁶ Այդ մասին տե՛ս Ա. Սարգսյան, Աշվ. աշխ., էջ 25:

ականախտորեն ցույց են տալիս, որ բացի արեղյանական բարեփոխման հետևանքով առաջացած տարբերություններից, հայերենի երկու տարբերակների ուղղագրական տարբերությունները ունեն շատ ավելի խոր հիմքեր, և վերադարձը դասական ուղղագրության չի կարող լուծել հայերենի միասնական ուղղագրության խնդիրը, որոնք ունեն թե՛ լեզվական և թե՛ արտալեզվական բնույթ:

Р. К. САКАПЕТОЯН - *Фонетико-орфографические различия в двух вариантах литературного армянского языка.* - В статье рассматриваются звукоизменяемые и орфографические варианты слов в восточноармянском и западноармянском - с выявлением их происхождения. В частности отмечаются различия, возникшие вследствие метатонимических, комбинаторных и общеисторических звукоизменений как результат лингвистических и экстралингвистических факторов. Основной причиной возникновения фонетических вариантов является передвижение согласных в западноармянском языке по сравнению с грабаром и восточноармянским. Фонетико-орфографические различия в двух ветвях современного армянского языка в основном обусловлены особенностями исторического развития их фонетической системы.